ՍՈՖՅԱ ԱՎԱԳՅԱՆ

ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԻԲՐԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼԻԴԵՐԻ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՆ (Ի.ՍՏԱԼԻՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Իոսիֆ Ջուղաշվիլին դեռևս Թիֆլիսում ծավալած իր ընդհատակյա գործունեության ժամանակ և արդեն դրանից հետո Լենինի ծրագրի կրակոտ երկրպագուներից էր և առիթը բաց չէր թողնում մամուլում նրան քննադատողների դեմ համառ պայքար մղելու համար: Քութայիսիից գրած նամակներում Ջուղաշվիլին ներկայանում է իբրև զմայլված աշակերտ, որի համար Լենինը մարքսիզմի գերագույն մեկնաբան է, «լեռների արծիվ» (այդպես է Ջուղաշվիլին անվանում Լենին իր նամակներից մեկում): Այստեղ էլ Ջուղաշվիլիին գրավեց Լենինի՝ մարքսիզմի ռազմատենչ մեկնաբանությունը. նա մարքսիստ էր ոչ թե խաղաղ մտավորական տիպի, ինչպիսին էր Պլեխանովը, այլ ատելությամբ վառված մարդ, որը ժողովրդին կոչ էր անում պայքարելու ցարիզմի դեմ հանուն սոցիալիզմի [8]:

Ո՞վ էր այդ մարդը, որն այդպես գրավել էր Ջուղաշվիլիին, որի հեղինակությունը աներկբայորեն ընդունված էր: Խորհրդային գրականության մեջ Լենինը ներկայացված է իբրև առաքինի, ինտելիգենտ, բարության և մարդասիրության խորհրդանիշ, երկրպագության արժանի կերպար: Սակայն Խորհրդային Միության փլուզումից հետո հասու դարձան արխիվային նյութերը, որոնք նորովի լույս սփռեցին բոլշևիկյան շարժման և դրա առաջնորդի իրական կերպարի վրա:

Այսպես, ժամանակակիցներից մեկի՝ Գ.Ա.Սոլոմոնի[1] վկայությամբ Լենինը «բարձրահասակ չէր, դեմքը տիաճ, վանող արտահայտություն ուներ... Նա շատ վատ հոետոր էր, առանց տաղանդի դուլգն ինչ կայծի... Նա մեծ դեմոգոգ էր... Լենինը շատ հետաքրքիր զրուցակից էր մեծ ժողովներում, երբ նա ամբիոնում

[1] Գ.Ա.Սոլոմոնը (ծնվ. 1868թ.) 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի առաջին տասնամյակի Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական շարժման ակտիվ մասնակիցներից էր: Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո արտասահմանից վերադառնում է Ռուսաստան և նոր կառավարությունում զբաղեցնում մի շարք պաշտոններ Արտաքին գործերի և Արտաքին առևտրի կոմիսարիատներում: Սակայն նա չէր ընդունում բոլշևիկյան գաղափարախոսությունը և ԲԳԿ(բ) ծրագիրը, ինչի մասին բացահայտորեն ասում էր Լենինին: 1922թ. ընդհատելով իր բոլոր կապերը Լենինի կառավարության հետ՝ մնում է արտասահմանում:

կանգնած չէր և իրեն հատուկ ձևով չէր ընդհատում՝ նույնիսկ գործի դնելով իր հակառակորդին վիրավորելու անհարիր միջոցները. ծեր առաջ խելացի, բազմակողմանի կրթված մարդ էր, որն աչքի էր ընկնում հնարամտությամբ: Ճիշտ է, նրա հետ ավելի մտերիմ ծանոթության դեպքում դուք հեշտությամբ նկատում էիք նաև նրա թույլ, ուղղակի ասեմ, պարզապես զզվելի կողմերը: Ամենից առաջ վանում էր նրա կոպտությունը, միախառնված անանցանելի ինքնագոհունակությանը, զրուցակցի նկատմամբ քամահրանքով և ինչ-որ (այլ բառ չեմ գտնում) «քթողականությամբ» զրուցակցի վրա, հատկապես այլախոհի և նրա հետ չհամաձայնողի և, ընդ որում, *թույլ, ոչ հնարամիտ, ոչ ճարպիկ մրցակցի* (ընդգծումը մերն է. – Ս.Ա.)... Նա չէր քաշվում բանավեճում լինել ոչ միայն ամբարատավան և կոպիտ, այլև իրեն թույլ էր տալիս հակառակորդի հասցեին կտրուկ անձնական արտահայտություններ՝ հաճախ հասնելով նաև հայհոյանքի: Այդ պատճառով էլ, որքան ես հիշում եմ, Լենինը *չուներ մտերիմ, երդվյալ ընկերներ* (ընդգծումը մերն է. – Ս.Ա.)... » [6]: Հետաքրքրական են մարդկային փոխհարաբերություններում Լենինի դրսևորած անձնային հատկանիշները: Այս մասին Գ.Ա.Սոլոմոնը գրում է. «Լենինը հատկապես կոպիտ և անխնա էր թույլ մրցակիցների հետ. նրա «քթողականությունը» մարդկային հոգու մեջ նման ընդդիմախոսների նկատմամբ հատկապես լկտի և զազրելի էր: Նա ճշգրիտմաբար վայելում էր իր հակառակորդի անօգնականությունը և չարակամորեն ու ցուցադրաբար ցնծում էր նրա նկատմամբ իր հաղթանակից... Նրա մեջ չկար ոչ ուշադիր վերաբերմունք հակառակորդի տեսակետի նկատմամբ, ոչ պարտադիր ջենտլմենություն... Սակայն գոնե մի քիչ ուժեղ, իրեն չենթարկվող հակառակորդներին Լենինը պարզապես տանել չէր կարողանում, նրանց նկատմամբ *հիշաչար էր* և ծայրահեղ *վրեժխնդիր*, հատկապես եթե մեկ անգամ նման հակառակորդը «նրան տեղն էր դրել»... Նա երբեք դա չէր մոռանում և մանրոգի քինախնդիր էր... Նա երբեք ուշադրություն չէր դարձնում ուրիշների տառապանքներին. նա պարզապես նրանց չէր նկատում և մնում էր նրանց նկատմամբ բացարձակապես անտարբեր» [6]:

Նմանատիպ կարծիք է հայտնում նաև Լենինի ժամանակակիցներից մեկ ուրիշը՝ Ա.Ի.Բալաբանովան[2]: Մասնավորապես, իր հուշերում նա գրում էր. «*Լենինին պետք էին մասնակիցներ և ոչ թե գինակիցներ* (ընդգծումը մերն է. Ա.Ս.): Հավատարմությունը նրա համար նշանակում էր բացարձակ վստահու-

---

[2] Ա.Ի.Բալաբանովան (ծնվ. է 1878) հարել է սոցիալ-դեմոկրատական շարժմանը, մասնակցել է ռուսական և իտալական սոցիալիստական շարժումներին: 1917թ. վերադառնալով Ռուսաստան՝ անդամագրվել է ՌՍԴԲկ-ին: Նրա քաղաքական հայացքները շատ հարցերում չէին համընկնում Լենինի հայացքներին: 1921թ. Բալաբանովան դուրս եկավ ԲԳԿ(բ)-ից և արտագաղթեց արտասահման:

թյուն, որ մարդը կկատարի բոլոր հրամանները, նույնիսկ այնպիսիները, որոնք մարդկային խղճի հետ հակասության մեջ են... Նա անհանդուրժող, համառ, դաժան և անարդար էր իր ընդդիմախոսների հետ շփումներում...» [10, էջ 29-30]: Լենինը նպատակին հասնելու համար միջոցների մեջ խտրականություն չէր դնում (դա վերաբերում է նաև մարդկային ռեսուրսների ընտրությանը), ինչպես արխիվային նյութերից է պարզվում, քրեական տարրերի ավազակային հարձակումներով լցնում էր կուսակցական բյուջեն: «Ցանկացած սրիկա կարող է մեզ համար օգտակար լինել նրանով, որ նա սրիկա է» [4]: Այս կարգախոսով էր առաջնորդվում բոլշևիկյան շարժման առաջնորդը իր քաղաքական գործունեության ընթացքում:

Կ.Ի.Ալեկսինսկայան գրում էր, որ «Լինելով ծայրահեղ նախանձոտ, նա չէր կարող թույլ տալ, որ որևէ մեկը՝ բացի իրենից, մնար հաղթող: Դաժանությունը և չարությունը նրա մեջ արթնանում էին ցանկացած բանավեճում, նաև կրոկետ կամ ճատրակ խաղալիս, երբ նա պարտվում էր: Դրսևորել անկախություն, վիճել նրա հետ ցանկացած բանի շուրջ կամ հաղթել նրան կրոկետում նշանակում էր մեկընդմիշտ ծեռք բերել թշնամի ի դեմս Լենինի» [5]:

Պայքարի մեջ նա ընդունում էր միայն տոտալիտար, ամբողջատիրական աշխահայեցողություն և պահանջում էր, որ այդ համակարգը ընդունվի ամբողջությամբ առանց քայլ նահանջելու: Պայքարի մեջ և հեղափոխական նպատակներին հասնելու համար նա ընդունում էր բոլոր հնարավոր միջոցները: *Բարիք է ցանկացած բան, որ ծառայում է հեղափոխությանը, չարիք՝ դրան խանգարող ամեն ինչը*: Լենինին հատուկ էր իմպերիալիստական, դիկտատուրական մտածողություն: Նա բացառում էր դեմոկրատիան և մեծամասնության սկզբունքը և կառավարման մեջ ընդունում միայն ընտրյալների փոքրամասնություն: Նա հավատ չուներ մարդու հանդեպ, մարդու ներքին բովանդակության և վեհության հանդեպ, բայց դրա դիմաց նա ուներ խորին համոզմունք, որ հարկադրական հասարակական կազմակերպությունը կարող է ստեղծել ցանկացած տիպի նոր մարդու, բացարձակապես սոցիալական էակի, որն այլևս բռնության կարիքը չի ունենա: Նա անտարբեր էր մարդու հանդեպ և ուզում էր ստեղծել այնպիսի հասարակարգ, որտեղ մարդը ավելի լավ կապրի, որտեղ մարդը չի ճնշվի մարդու կողմից. Լենինը աներկբայորեն հավատում էր պրոլետարիատի դիկտատուրային և համոզված էր պրոլետարիատի բացառիկ առաքելության մեջ: Նա որդեգրեց նոր հեղափոխական բարոյախոսություն, որը համապատասխանում էր նոր հոգեբանական տիպին և նոր ժամանակներին: Նրա մեջ պակասեց մարդասիրությունը և ավելացավ դաժանությունը [2]: Լենինը առաջնորդի այն տիպն էր, որն ուներ բռնատիրական իշխանություն, որ

խոսում էր զանգվածների շուրթերով և արհամարհում այդ նույն զանգվածներին:

Հատկանշականն այն է, որ Լենինը հարկադրանքը նախատեսում է ոչ միայն բուրժուազիայի, այլև հենց իրեն դիկտատոր հռչակած պրոլետարիատի նկատմամբ: Սրա արդյունքում մարդիկ վերջապես կսովորեն ենթարկվել իրենց կողմից ընտրված խաղի կանոններին, հասարակական կյանքի նոր պայմաններին, որից հետո ինքնըստինքյան կվերանա բռնությունը, պետությունը, և այստեղ կավարտվի դիկտատուրան: Մարքսիզմը համոզված էր, որ բարիքը կերտվում է չարիքի միջոցով, լույսը՝ խավարի [2]:

Տակերը նշում է, որ «հեղափոխական կուսակցության Լենինյան դրույթը ոչ միայն համապատասխանում էր Զուղաշվիլիի ռազմատենչ բնավորությանը, այլև նպաստում էր հոգեբանական տեսակետից ի հայտ եկող նոր զգացումի առաջացմանը՝ համերաշխության պահանջմունքին, ընտրյալների խմբին պատկանելու զգացողությանը» [8]: Սակայն հեղափոխական-համախոհների միացյալ, ընկերական հանրությունը գոյություն ուներ միայն թղթի վրա: Բայց նույնիսկ իբրև տեսական դրույթ՝ այն Զուղաշվիլիի համար ծեռք բերեց մեծ նշանակություն, քանի որ այն բավարարում էր նրա ընդհանրության պահանջմունքը: Դա հենց այն մարտական միությունն էր, որի անդամների շարքին կարող էր նա հպարտորեն իրեն դասել: Այսպիսով, Զուղաշվիլին Լենինի ուսմունքում տեսավ «ընդհանրության» դրույթը, որը «աշխարհիկ» կյանքով ապրող մարդկանց մեջ բավարարվել չէր կարող, քանի որ նրանց կողքին նա իրեն մեկուսացած ու օտար էր զգում, չէ՞ որ հենց ինքը ի սկզբանե իր համար նախանշել էր ուրիշ ճանապարհ, առաքելություն, որի համար, իր խորին համոզմամբ, նա ծնվել էր ու կոչված էր կատարելու այդ առաքելությունը՝ նա Կոբան էր: Իր մտքերում, իր երազանքներում նա ներակայանում էր իբրև հերոս, որի առաջ բացվել է պայքարի ասպարեզը: Այդ տարիների նրա ընկերները և ականատեսները արտահայտում են միանգամայն նույնական կարծիքներ այն մասին, որ նա անսահման ցանկություն ուներ դառնալու հերոս զանգվածների համար, միևնույն ժամանակ բավական խոցելի էր և իր անձի մասին մեծ կարծիք ուներ [8]:

Վերլուծելով Զուղաշվիլիի կյանքի հետագա ընթացքը և նրա վարքագիծը թե հեղափոխական գործունեության ընթացքում, թե քաղաքական իշխանությանը հասնելուց հետո՝ չենք կարող անտեսել այն հանգամանքը, որ, եթե մինչև այժմ Սոսոյի նույնականացումը տեղի էր ունենում հիմնականում գրական հերոսների կերպարների հետ, ապա այժմ նրա համար միանգամայն իրական էր դառնում միաժամանակ լինել և Կոբա, և մարքսիստ-հեղափոխական: Լենինի մեջ նա գտավ նոր կերպար, որը արժանի էր նմա-

նակման, ինչն էլ կանխորոշեց նրա հետագա կյանքի ամբողջ ընթացքը: Նա Լենինի մեջ տեսնում էր մեծագույն և անվախ մարտիկի, որը կոչ էր անում պրոլետարական Ռուսաստանին պայքարի բուրժուական Ռուսաստանի դեմ: Հետագայում Ստալինն ինքը այսպես էր նկարագրում Լենինին. «Երբ ես նրան համեմատում էի մեր կուսակցության մյուս ղեկավարների հետ, ինձ անընդհատ թվում էր, որ Լենինի զինակիցները՝ Պլեխանովը, Մարտովը, Ակսելրոդը և ուրիշները, մի գլուխ ցածր են Լենինից, որ Լենինը նրանց հետ համեմատած ոչ միայն ղեկավար է, այլև ղեկավար բարձրագույն տիպի, լեռների արծիվ, որը պայքարում չի ճանաչում վախ և որը խիզախորեն առաջ է տանում կուսակցությունը ռուս հեղափոխական շարժման անհիմանալի ճանապարհներով» [7]: Այն որ Զուղաշվիլին Լենինին համարում էր «լեռների արծիվ», ինչպես նա պատկերավոր արտահայտվում էր Լենինի մասին նաև իր մի շարք նամակներում, հիմք է տալիս մտածելու, որ իսկապես այդ ժամանակ Զուղաշվիլին Լենինի մեջ տեսավ գրքային հերոսի իրական կերպար, որի հանճարի ու մեծության շուրջ համախմբվում էր պայքարող դասակարգը, ու որը մարմնավորում էր Առաջնորդին, նրան, ում կարելի էր նմանվել, ու որի դրոշի տակ նա պետք է իրականացներ Կոբայի իր առաքելությունը: 1905թ. գիտաժողովներից մեկի ժամանակ նա առաջին անգամ տեսավ Լենինին, որի մասին տպավորություններն այսպես էր նկարագրում. «Ես հույս ունեի տեսնելու մեր կուսակցության լեռների արծվին, գերագույն մարդու, գերագույն ոչ միայն քաղաքականապես, այլև, եթե ուզում եք, ֆիզիկապես, քանի որ իմ երևակայության մեջ Լենինը պատկերվում էր հսկայի տեսքով: Եվ ինչպիսին էր իմ հիասթափությունը, երբ ես տեսա ամենասովորական մարդուն, որը միջինից ցածրահասակ էր, ոչնչով, բացառապես ոչնչով հասարակ մահկանացուներից չտարբերվող» [7]: Նրան հիասթափեցրեց նաև այն, որ Լենինը, ինչպես վայել էր գերագույն մարդուն, չեկավ ավելի ուշ, այլ նույնիսկ շուտ, և հանգիստ զրուցում էր շարքային պատվիրակների հետ: Եվ, ինչպես ինքն էր ասում, միայն հետագայում նա հասկացավ, որ այդ ծգտումը՝ ոչնչով աչքի չընկնել, չընդգծել իր բարձր կարգավիճակը «Լենինի ամենաուժեղ կողմերից մեկն էր՝ իբրև նոր զանգվածների նոր առաջնորդի, հասարակ և սովորական զանգվածների» [7]: Նման հիասթափություն ապրեց նաև սոցիալ-դեմոկրատ Տ.Ի.Ալեկսինսկայան. «Ընկալելով մարքսիստական դոկտրինը իր անդեմ մեթոդով՝ մենք, այնուամենայնիվ, առաջնորդի մեջ փնտրում էինք մարդու, որի մեջ միավորված լինեին Բակունինի խառնվածքը, Ատեփան Ռազինի խիզախությունը... Մեր առաջ չկար նման կենդանի կերպար, սակայն մենք ուզում էինք մարմնավորել այն ի դեմ Լենինի: Եվ երբ ես նրան առաջին անգամ տեսա 1906թ. Պետերբուրգում ցույցերից մեկում, ես սարսափելի անբարարված էի: Ինձ զարմացրեց ոչ թե

նրա արտաքինը... այլ այն, որ երբ գոռացին «Կազակնե՞րը», նա առաջինը փախավ: Ես նայում էի նրա հետևից: Նա ցատկեց արգելքի վրայով, գլխարկն ընկավ գլխից: Այդ հիմար գլխարկի անկման հետ իմ երևակայության մեջ ընկավ նաև ինքը Լենինը... Փախավ միայն Լենինը» [5]:

Ժամանակակիցները հիշում են, որ նա ամեն ինչում ուզում էր նմանվել Լենինին, ընդօրինակում էր նրա մտքերը, նրա արտահայտությունները, քաղաքական գաղափարները հիմնավորելիս հենվում էր Լենինյան դրույթների վրա [8]: Այստեղ պետք է կատարենք մի կարևոր հարցադրում. ինչպե՞ս էր, որ փառասեր Կոբան, որը չէր ճանաչում որևէ իշխանություն, որը մերժել էր նույնիսկ աստծուն, քանի որ ինքն իրեն համարում էր աստվածային, որը չէր հանդուրժում որևէ ուժ, որ իրենից վեր էր կանգնած, հիմա աներկբայորեն ընդունում էր մեկ այլ անձի, հասարակ մահկանացուի հանճարը և խոնարհվում էր նրա առաջ: Տակերը այս հանգամանքը բացատրում էր նրանով, որ «դա բոլորովին չէր հակասում իր եսասիրությանը և ինքնահիացմունքին: Ընդհակառակը, դա ուժեղացնում էր այս գծերը: Նախ, Լենինը կենդանի օրինակ էր հեղափոխական ասպարեզում բարձր դիրքի հասնելու համար: Եվ հետո, Լենինը համոզիչ կերպով ապացուցում էր, որ այդ ոլորտում բավական տեղ կա ոչ միայն մեկ հսկայի համար» [8]:

Այս դատողությունը շարունակելով՝ կարող ենք ասել, որ Լենինը, լինելով փառքի և համընդհանուր ճանաչման հասած մարդու իրական օրինակ, Զուղաշվիլիի համար մարմնավորում էր նաև այն կերպարը, որից նա իրական կյանքում զրկված է եղել՝ հայրը, որի ուժի, հանճարի և կարողության առջև խոնարհվում է զավակը, հայրը, որին նա ուզում է նմանվել, որովհետև հայրը կատարյալ է, նա ուժեղ է ու պաշտպանում է, նրա հետ լինելը անվտանգ է: Լենինը Զուղաշվիլիի համար դարձավ այդ իրական օրինակը, որովհետև նա, ամենից առաջ, մարմնացումն էր ուժի, այն կարողության, որով օժտված էին գրքային հերոսները՝ զանգվածների առաջնորդի, որի հետևից հավատով ու խորին համոզմամբ գնում էր դասակարգը: Եթե Լենինը, լինելով կենդանի օրինակ, նպաստում էր Զուղաշվիլիի նույնականացման մեխանիզմի իրականացմանը, և կարծում ենք, որ դա իրոք այդպես էր, ապա այդ պահանջմունքի բավարարումը միաժամանակ հնարավորություն էր տալիս նրան բավարարելու մեկ այլ պահանջմունք ևս՝ ընդհանրության զգացումը (social interest), որևէ խմբին պատկանելու պահանջմունքը: Եվ պատահական չէ, որ Զուղաշվիլին այդ ժամանակ ընտրեց արդեն մեծ ուժ դարձած բոլշևիկյան կուսակցությունը, որովհետև ուժեղ և անվախ Կոբան չէր կարող հանդուրժել թույլերին, թույլերը չեն կարող գործել, չեն կարող հերոսանալ, դրա համար նա ձգտում էր դեպի

ուժը, որպեսզի, նախ և առաջ, սեփական աչքում վերահաստատի իր հզորությունն ու բացառիկությունը:

Լենինի հետ նույնականացման ընթացքում, կարծում ենք, Զուղաշվիլին իր մեջ ներառեց ոչ միայն անձնային հատկանիշները, այլև պայքարի և քաղաքական գործունեության բոլոր այն միջոցները, որոնք կիրառել կամ կիրառում էր նույնականացման օբյեկտը: Ինչու՞ նույնականացման համար ընտրվեց հենց Լենինի կերպարը: Կարծում ենք, սրան նպաստեցին մի շարք հանգամանքներ: Նախ, Լենինը ոչ միայն քաղաքականության մեջ կայացած և համընդհանուր ճանաչման հասած լիդեր էր, այլև օժտված էր մի շարք անձնային գծերով, որոնք արդեն ձևավորվել էին նույնականացողի մեջ (ծայրահեղ անհանդուրժողականություն այլախոհության նկատմամբ, մարդատյացություն, քինախնդրություն, կասկածամտություն և այլն): Լենինը, լինելով իշխանության խորհրդանիշ, կենդանի օրինակ էր մարդու, որը այդ իշխանությանը հասնելու և կառավարելու միջոցների մասին յուրահատուկ պատկերացումներ ուներ: Միջոցներ, որոնք հետագայում Իոսիֆ Զուղաշվիլին յուրացնելով կատարելագործեց՝ շարունակելով քաղաքական այն ծրագիրը, որը որդեգրել էր:

Ամփոփելով կարելի է ասել, որ նույնականացման գործընթացը կարևորվում է նաև քաղաքական լիդերի անձի ձևավորման համար: Անձի զարգացման ընթացքում նույնականացում կարող է տեղի ունենալ թե իրական սուբյեկտների, թե գեղարվեստական և թե երևակայական կերպարների հետ: Նույնականացման հաջորդ օբյեկտի ընտրությունը, կարծում ենք, կախված է այն բանից, թե ինչ հաջողությամբ է ընթացել նույնականացումը ֆալլուսային փուլում [9], որքանով է անվնաս և լիարժեք տեղի ունեցել «Ես-իդեալի» ձևավորումը և ինչ հարաբերության մեջ է այն մտել Ես- ի հետ: Երբ նույնականացման համար ընտրվում է արդեն կայացած լիդերի կերպարը, ապա ներառվում են օբյեկտին բնորոշ այն հատկանիշները, որոնք նպաստել են նրա քաղաքական անձի կայացմանը: Դրանք ոչ միայն օբյեկտի անձնային հատկանիշներն են, այլ նաև այն արժեքներն ու դիրքորոշումները, որոնք բնութագրում են նրա քաղաքական վարքը: Կախված նրանից, թե որքանով է արժեքային այս ամբողջ համակարգը ներդաշնակվում նույնականացողի Իրական Ես-ի հետ՝ պայմանավորված է նրա քաղաքական հետագա գործունեությունը և միջոցների ընտրությունը: Եթե նույնականացման ընթացքում պահպանվում է մրցակցային տարրը, ապա նույնականացող քաղաքական լիդերը պահպանում է իր անձով նմանակման օբյեկտին փոխարինելու ցանկությունը[3]:

---

[3] Այս երևույթը կարելի է պայմանականորեն անվանել քաղաքական անձի «էդիպյան բարդույթ»:

Ավարտելով այս շրջանի վերլուծությունը՝ անդրադառնանք նաև մեկ կարևոր իրադարձության: Ստալինի կենսագրության հետազոտողները նշում են, որ Լենինի հետ նույնականացումը լրջորեն թուլացրեց Զուղաշվիլիի հոգևոր կապը վրաց ժողովրդի հետ [3, 8]: Ինչու՞: Այս հարցին միանշանակ պատասխան չի տրվել: Եթե Զուղաշվիլին մեծ պահանջմունք էր զգում նույնականանալու Լենինի հետ, եթե ուզում էր նմանվել նրան ամեն ինչում, ապա դա, անշուշտ, պետք է վերաբերեր նաև ազգային պատկանելությանը: Լենինը, արդեն թվարկած մի շարք հատկանիշներից բացի, մարմնավորում էր նաև ռուս ազգին, հետևաբար նրան նմանվել, նշանակում էր նաև դառնալ ռուս: Իսկ ռուս դառնալու համար, նախ և առաջ, պետք էր փոխել ընկալումները և ինքնագիտակցության համակարգից դուրս մղել վրացի լինելը: Սրան նպաստեց նաև այն, որ այդ ժամանակ Զուղաշվիլին արդեն հասցրել էր վիճաբանել բոլոր այն վրացի հեղափոխական գործիչների հետ, որոնց հետ նա երբևէ համագործակցել էր, ինչի հետևանքով էլ Վրաստանի կուսակցական շրջանակներում ծեռք էր բերել կռվարար և անհաշտ մարդու համբավ: Վրաստանը այդպես էլ իր համար չդարձավ հեղափոխական գործունեությանը նպաստող միջավայր, թեև հենց այդտեղ էր նա սկսել իր քաղաքական գործունեությունը, սակայն դրանում Զուղաշվիլին մեղադրում էր ոչ թե իրեն, այլ հենց Վրաստանին՝ դա բացատրելով Վրաստանի և վրաց ժողովրդի հետամնացությամբ, որոնք, ամենայն հավանականությամբ, նրա կարծիքով, չէին կարող հասկանալ նրա հանճարեղ մտածողությունը իր ողջ ծավալով: Դրա համար անհրաժեշտ էր, որպեսզի նա իրեն նույնականացնի Ռուսաստանի հետ: Ինչու՞: Նախ և առաջ, այն պատճառով, որ Ռուսաստանը Վրաստանի համեմատ ավելի հզոր էր ոչ միայն իր աշխարհագրական տարածքով, այլև մարդկային և նյութական ռեսուրսներով: Ռուսաստանը նրա համար այն միակ տարածքն էր, որտեղ նա կարող էր և պետք է ծավալեր իր հեղափոխական գործունեությունը, Ռուսաստանը նաև մարմնացումն էր այն ուժի, որին ձգտում էր Զուղաշվիլին ու որի հետ ուզում էր նույնականանալ: Հետևաբար, նա ուզում էր նույնականանալ ոչ թե Ռուսաստան պետության հետ, այլ այն ուժի հետ, որն այդ պետությունը ուներ: Եթե նորից վերադառնանք նրա վաղ մանկության շրջանին ու նորից դիտարկենք նրա հարաբերությունները ծնողների և, հատկապես, հոր հետ, ապա կարող ենք նկատել, որ նույնականացման այս օբյեկտի ընտրությունը ինչ-որ չափով կապված է նրա վրա գործած ճնշումների և, հատկապես, հոր դաժան վերաբերմունքի հետ: Ծեծված լինելու այս վախը հետապնդեց նրան ամբողջ կյանքում, և ենթագիտակցական մակարդակում նրա մեջ ձևավորվեց որոշում՝ երբեք այլևս չլինել ծեծված, և հետագայում նա հասկացավ իր համար մի պարզ ճշմարտություն՝ սեփական առավելությունը հաստատելու համար

միշտ պետք է լինել հաղթողների կողմը, նրանց կողքին, մասնակիցն ու կրողը նրանց ուժի: Իր մի շարք հոդվածներում հանդիպում ենք մեր այս ենթադրության ուղղակի և անուղղակի հիմնավորումների: Մասնավորապես, դրանցից մեկում կարդում ենք. «զարգացման տեմպերը ուշացնել, իսկ դա նշանակում է հետ մնալ: Իսկ հետամնացներին խփում են: Բայց մենք չենք ուզում ծեծված լինել: Ոչ, մենք չենք ուզում: Ի միջի այլոց, հին Ռուսատատանի պատմությունը կայանում է նրանում, որ նրան շարունակ խփում էին հետամնացության համար. . Խփում էին, որովհետև դա եկամտաբեր էր և անպատժելի: Նրանք խփում էին և ասում «դու առատ ես, ուրեմն կարելի է քո հաշվին հարստանալ», նրանք խփում էին և ասում «դու աղքատ ես, ուժա-զուրկ», ուրեմն կարելի է քեզ խփել ու թալանել անպատիժ: Այդպիսին է շահագործողների օրենքը՝ խփել հետամնացներին և թույլերին: Դու հետ ընկար, դու թույլ ես, նշանակում է՝ դու իրավացի չես, ուրեմն քեզ կարելի է հարստահարել և խփել: Դու հզոր ես, նշանակում է՝ դու իրավացի ես, նշանա-կում է քեզնից պետք է վախենալ: Սհա թե ինչու մեզ այլևս չի կարելի հետ մնալ» [7]: Այսպիսով, Ստալինի ձգտումը իրեն նույնականացնել Ռուսաստանի հետ կարելի է տարբեր կերպ մեկնաբանել: Մի կողմից այդ նույնականացումը անհրաժեշտ էր, որպեսզի ամբողջանար մեկ այլ նույնականացում՝ Լենինի հետ նույնականացումը, մյուս կողմից հոգեբանական նույնականացման հիմքում ընկած էին նաև քաղաքական դրդապատճառները: Այսպես, ընտանիքում հոր ագրեսիվ վարքը, պարբերական ծեծերը, Զուղաշվիլիի մեջ ձևավորեցին այն պատկերացումը, որ խփել կարելի է և պետք է միայն թույլերին, իսկ մանկուց նրա մեջ առաջացած վախը ծեծի նկատմամբ նրա մեջ ձևավորեց ևս մեկ համոզմունք՝ չծեծվելու, չճնշվելու համար պետք է ուժեղ լինել ոչ միայն անձնապես, այլև պետք է հարել ուժեղներին, ընդունվել նրանց կողմից իբրև հավասար և դրանով ապահովագրել սեփական ես-ը ճնշումներից: Ցանկացած մարդ պահանջմունք ունի պատկանելու որևէ խմբի, որովհետև այդ պատկանե-լությունը անձին տալիս է անվտանգության, պաշտպանվածության զգացողու-թյուն, իսկ ազգային պատկանելությունը մարդուն տրվում է ի ծնե և ապահովում արմատներ ունենալու պահանջմունքը: Հետևաբար այն հանգամանքը, որ Զուղաշվիլին այդքան հեշտությամբ հրաժարվեց իր ազգությունից, պայմանա-վորված է ոչ միայն վերը նկարագրված գործոններով, այլև, կարծում ենք, նրանով, որ մշտական ձգտումը հզորության, ուժի նրան չէր կարող թույլ տալ ընդունելու այն խմբին, որին նա պատկանում էր ծննդով. հիմնականում այն պատճառով, որ Վրաստանը նրա աչքում անհաջողակ էր իր պատմությամբ, մշտապես ծեծված ճակատագրի կողմից, ինչպես ինքը՝ Սոսոն, թույլ, փոքր և անկարող պետություն, որի հետ նույնականանալը, որի մասը լինելը միայն

խոչընդոտում էր նրա «բարձր առաքելության» իրականացմանը: Վրաստանի կողքին նա տեսնում էր Ռուսաստան՝ մեծ իր աշխարհագրական տարածքով և հզոր իր ներուժով, ինչն էլ նրան հնարավորություն էր տալիս բավարարելու արմատներ ունենալու պահանջմունքը: Ուրեմն, մտածելով, որ եթե ուզում ես լինել ուժեղ, պետք է լինես ուժեղների մեջ, նա համապատասխան ընտրություն է կատարում իր ծագման ու իր Ես-ի մասին սեփական պատկերացումների միջև: Փոքրի և թույլի նկատմամբ արհամարհական վերաբերմունքը պատճառ դարձավ իր ազգային պատկանելության ժխտման. նա չէր կարող իրեն համարել վրաց ժողովրդի մի մասը և հաճախ էր հեգնանքով իր հայրենիքը անվանում «սովետական տարածքի ինչ-որ պատառ, որ կոչվում է Վրաստան»:

Գրականություն

1. **Адлер А.** Наука жить, Киев, Port-Royal, 1997. – 288 с.
2. Арутюнов А. Досье Ленина без ретуши. From http://www.vugnet.ru/biblio/archieve/. 22.09.2006.
3. **Бердяев Н.А.** Истоки и смысл русского коммунизма, Москва, "Наука", 1990. – 224 с.
4. **Диллигенский Г.Г** Социально-политическая психология, Москва, "Новая школа".1996. – 352 с.
5. Ленин В.И. Полное собрание сочинений. From http://www.vugnet.ru/biblio/archieve/lenin-1/. 22.09.2006.
6. "Родная земля", N 1, 1926. 1 апреля. С. 6.
7. Соломон Г.А. Вблизи вождя; свет и тени (Ленин и его семья). http://www.vugnet.ru/biblio/solom/. 14.05.2006.
8. Сталин И.В. Собрание сочинений. Т. 13. From http://www.vugnet.ru/biblio/archieve/stalin-13/. 22.09.2006
9. **Такер Р.** Сталин. Путь к власти 1879-1929, Москва, "Наука", 1991. – 313 с.
10. **Фрейд З.** Очерки по психологии сексуальности, Минск, Попурри,1997.-480 с.
11. **Balabanova A.** Impressions of Lenin. University of Michigan Press. 1984. p.29-30.
12. **Iremaschwili J.** Stalin und Tragodie Georgiens., Berlin, 1932.